<<Նոր ժամանակի կրթություն>>

ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՄ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկա՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նունե Գևորգյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ գ. Արտաշատ 1 հիմն. դպրոց

Արարատ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը
Ուսուցիչ՝ Նունե Գևորգյան
Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզ գ.Արտաշատ 1 հիմն.դպրոց

1.Ի՞նչ է առակը

2.Ո՞րն է աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

3.Ի՞նչպես են ազդում աստվածաշնչյան առակները մարդու արժեքային համակարգի վրա

4.Արդյո՞ք արդիական են այսօր աստվածաշնչյան *առակները*

Առակների միջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արատները: Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն: Անտիկ շրջանում և միջնադարում առակները արձակ ժանրի ստեղծագործություններ էին, սակայն հետագայում դրանք սկսեցին հիմնականում գրվել չափածո: Առակի վերջում սովորաբար հեղինակը դրսևորում է իր հստակ վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Սողոմոնի առակները Հին Կտակարանում համակցված են 31 գլուխների, որոնք թվարկում են կյանքի բոլոր պատկերացումները և խորհուրդներ տալիս, թե ինչպես պետք է գործել յուրաքանչյուր դեպքում: Բայց եթե մենք դրանց ամբողջությամբ նայենք, ապա հրահանգների իմաստը անալոգ է Աստծո 10 պատվիրաններին, որոնք պետք է պահեն բոլորը, ովքեր ցանկանում են ապրել խաղաղության և բարգավաճման մեջ:

<<Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>> - այս հրաշալի նախադասությամբ է բացվում հինգերորդ դարի հայ մատենագրությունը՝ դառնալով թարգմանական և ինքնուրույն գրականության սկիզբ: Այս նախադասությամբ պիտի դրվի պատանու դաստիարակության սկիզբը:

Աստվածաշնչյան առակների միջոցով երեխաների մեջ ձևավորվում են բարոյական բարձր արժեքներ, կարողանում են տարբերակել աշխարհի չարն ու բարին, կյանքում ուղղորդվեն դրական արժեքներով: Այդ ամենի մեջ շատ կարևոր է հասկանալ, թե երեխան որքանով է ճիշտ ընկալել առակի ասելիքը: Առակ նշանակում է առ ակն,այսինքն աչքի առաջ:
Սողոմոնը պատանի հասակում թագավոր է դառնում: Նա հետևում էր իր հոր՝ Դավթի տված իմաստուն խորհուրդներին: Եհովան հավանում է նրան ու մի գիշեր երազի մեջ հարցնում է. «Սողոմո՛ն, ի՞նչ կուզեիր ինձանից ստանալ»: Ի պատասխան՝ Սողոմոնն ասում է. «Ո՜վ իմ Աստված, ես շատ երիտասարդ եմ ու երկիր կառավարել չգիտեմ: Ուստի, տո՛ւր ինձ իմաստություն, որպեսզի քո ժողովրդին ճիշտ ձևով առաջնորդեմ»: Աստծուն դուր է գալիս Սողոմոնի խնդրանքը: Հետևաբար, նա ասում է. «Քանի որ դու իմաստություն խնդրեցիր ու ոչ թե երկար կյանք կամ հարստություն, ապա դու կլինես այնքան իմաստուն, որքան աշխարհում դեռ ոչ մի մարդ չի եղել: Բայց դրա հետ մեկտեղ ես քեզ կտամ նաև այն, ինչ որ չխնդրեցիր՝ թե՛ հարստություն և թե՛ փառք»: Երբ Սողոմոնը՝ Դավթի որդին, մ.թ.ա. 1037թ.-ին դարձավ Իսրայելի թագավոր, «երեք հազար առակ գրեց»: Նրա իմաստուն խոսքերի որոշ մասն արձանագրվեց Աստվածաշնչի «Առակներ» գրքում: Այս առակներում հավիտենական ճշմարտություն է ամփոփված: Դրանք այսօր նույնպես ժամանակահարմար են: Առակները լինում են մի քանի տեսակի՝ փիլիսոփայական, հոգեբանափիլիսոփայական, աստվածաշնչյան և այլն: Աստավածաշնչում տեղ գտած առակներն

ունեն իրենց ուրույն մեկնաբանությունը և դաստիարակչական նշանակությունը։ Աստվածաշնչում մեզ հետ առակներով խոսում է ոչ միայն Սողոմոն թագավորը (Հին Կտակարան), այլ նաև Հիսուսը(Նոր Կտակարան)։

Սողոմոնի առակները նրա կյանքի փորձի արդյունքն են, որը նա փոխանցում է ոչ միայն իր ժառանգին,այլև բոլոր այն մարդկանց, ովքեր ցանկանում են ապրել իրենց խաղաղության մեջ և իրենց խղճի հետ ներդաշնակ։ Տիրոջ վախը, որը Սողոմոնի առակները կարդացող շատ մարդիկ բառացիորեն ընդունում են, նշանակում է հարգանք և ակնածանք աստվածային ուխտի հանդեպ, թե ինչպես պետք է ապրեն երկրի վրա գտնվող բոլոր մարդիկ։ Սողոմոն թագավորի առակները գրված են որպես հայր, որը կոչ է անում իր որդուն կյանքի իմաստություն սովորեցնել, թե որ գործողությունները կարող են համարվել ընդունելի և հաճելի Աստծո աչքին և որոնք՝ վատ։ Կարող ենք վերցնել Սողոմոն Իմաստունի «Սողոմոնի արդար դատավճիռ» առակը, որի միջոցով երեխաներին սովորեցնում ենք արդարամտություն, արդարադատություն։ Դասարանում երեխաները բարձրաձայն, իրար լրացնելով կարդում են ատվածաշնչյան այս պատումը.

Մի անգամ դժվար հարցով երկու կին են գալիս Սողոմոնի մոտ։ «Մենք երկուսով ապրում ենք նույն հարկի տակ,— բացատրում է նրանցից մեկը,— ես մի որդի ունեցա, իսկ դրանից երկու օր հետո արու զավակ ունեցավ նաև այս կինը։ Բայց մի գիշեր նրա որդին մահացավ։ Օգտվելով առիթից,որ ես քնածեմ՝ նա իմ կողքից վերցնում է երեխայիս, ու տեղը իր մահացած որդուն դնում։ Երբ ես արթնացա ու նայեցի մեռած երեխային,իսկույն նկատեցի, որ նա իմը չէ»։ Այդ ժամանակ երկրորդ կինը առարկում է. «Ո՛չ, ողջ մանուկը իմն է, իսկ մեռածը՝ նրանը»։ Առաջին կինը թե՝ ո՛չ, մեռած մանուկը քոնն է, իսկ կենդանին՝ իմը։ Եվ նրանք այսպես վիճում են։ Ինչպե՞ս պիտի վարվի Սողոմոնը։ Նա հրամայում է մի սուր բերել, ապա ասում է. «Ողջ երեխային երկու կտոր արեք.կեսը տվեք մեկին, մյուս կեսը՝ մյուսին

— Ո՛չ,— ճչում է իսկական մայրը։ — Խնդրում եմ, մի՛ սպանեք նրան, այլ տվեք այդ կնոջը։ — Իսկ մյուս կինն ասում է. «Մանուկը ո՛չ ինձ լինի, ո՛չ էլ քեզ։ Կիսե՛ք նրան»։ Վերջապես այստեղ Սողոմոնը միջամտում է. «Մի սպանեք երեխային։ Տվեք նրան առաջին կնոջը։ Նա է իսկական մայրը»։ Սողոմոնը գլխի է ընկնում, թե ով է իսկական մայրը, քանի որ վերջինս այնքան էսիրում իր զավակին, որ անգամ պատրաստ է նրան տալու ուրիշին, միայն թե երեխան կենդանի մնա։ Երբ մարդիկ լսում են, թե Սողոմոնն ինչպես լուծեց այդ հարցը, շատ են ուրախանում, որ այդքան իմաստուն թագավոր ունեն»։ Եթե Սողոմոն Իմաստունը Տիրոջից օժտված չլիներ իմաստությամբ, երբեք չէր կարողանա հասկանալ, թե կանանցից ո՞վ է ստում, և ո՞վ է ճիշտն ասում։

Նոր Կտակարանում Հիսուսի առակներն են, որոնք ունեն դաստիարակչական նշանակություն։ Հիսուսի առակները գտնվում են Աստվածաշնչի կանոնական ավետարաններում։ Դրանք հիմնականում հանդիպում են Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում, որտեղ այս առակներից շատերը կրկնվում են։ Մինչդեռ Հովհաննես ավետարանիչը միայն երկու առակ է պատմում «Բարի հովվի» առակը 10-րդ գլխում և «Ճշմարիտ որթատունկի առակը» 15-րդ գլխում

Իսկ թե ինչու Հիսուսը առակներով խոսում Աստվածաշնչում, երկու կարևոր պատճառ է նշվում.

Առաջին՝ այդպիսով Հիսուսը կատարում էր մարգարեությունը։ «Հիսուսը առակներով խոսեց ժողովրդի հետ։ Առանց առակի չէր խոսում նրանց հետ, որպեսզի կատարվի մարգարեի միջոցով

ասված խոսքը. «Առակներով կբացեմ բերանս և աշխարհը հիմնվելուց ի վեր պահված բաները կծանուցանեմ»։ Աստծու ներշնչմամբ գրված այդ խոսքերը սաղմոսերգուն ասել էր Հիսուսի ծնվելուց դարեր առաջ։ Մի՞թե ուշագրավ չէ, որ իր Որդու երկիր գալուց դեռ հարյուրավոր տարիներ առաջ Աստված որոշել էր, որ նա ուսուցանելու է առակների միջոցով։ Ուրեմն կարելի է ենթադրել, որ Եհովան գնահատում է ուսուցանելու այս մեթոդը։

Երկրորդ՝ ինչպես Հիսուսն ինքն ասաց, առակները օգնում էին զատորոշելու նրանց, ում«սիրտը կարծրացել էր» ճշմարտության հանդեպ ։ Իսկ ինչպե՞ս էին նրա առակները բացահայտում մարդկանց մղումները։ Որոշ դեպքերում նա միտումնավոր կերպով էր առակներով խոսում, որ մղի իր ունկնդիրներին հարցեր տալու դրանց լիարժեք նշանակությունը հասկանալու համար։ Խոնարհ մարդիկ այդպես էլ անում էին, իսկ հպարտ կամ անտարբեր մարդիկ՝ ոչ։ Փաստորեն, առակների միջոցով ճշմարտությունը հայտնի էր դառնում նրանց, ում սիրտը ծարավ էր ճշմարտության, սակայն թաքնված էր մնում նրանցից ում սիրտը հպարտ էր։

Մի քանի առակներ իրենց մեկնություններով.

Սերմնացանի առակը.

Մի սերմնացան ցանում է իր արտը:Սերմերի մի մասը ընկնում է ճանապարհի եզրին, սերմերը բաց են մնում և թռչունները դրանք ուտում են: Սերմերից մի քանիսը քարքարոտ ապառաժի վրա են ընկնում. Դրանք շուտ ծլում նկանաչում են, բայց երբ արևը ծագում է, ծիլերը խանձվում ու չորանում են, որովհետև խոր արմատներ չունեին: Սերմերի մի մասն էլ փշերի մեջ է ընկնում: Սրանք էլ են ծլում, սակայն մեծանալ ու պտուղ տալ չեն կարողանում, որովհետև փշերը բարձրանում ու խեղդում են ծիլերը: Մյուս սերմերն ընկնում են պարարտ հողի մեջ և աճելով ցորենով լի հասկեր են դառնում:Սերմերը բերք են տալիս մեկի դիմաց երեսուն, բաթսուն, հարյուր…

Սերմնացանը Քրիստոս է, սերմը՝ Աստծո խոսքը, որն իր մեջ կրում է ճշմարիտ ու հոգևոր կյանքի սկիզբը: Արտը ողջ մարդկությունն է, Աստծո խոսքը միշտ նույն արդյունքը չի ունենում: Բոլորն էլ, երբ լսում կամ ընթերցում են Աստծո խոսքը, ստանում են սուրբ սերմերի իրենց բաժինը, բայց թե դրանք ինչպե՞ս կաճեն՝ պայմանավորված է մարդու հոգևոր մակարդակից: Առակում խոսքը 4 տիպի մարդկանց մասին է։

Առաջին տիպի մարդիկ դրանք այն մարդիկ են, որոնց միտքը կարծր հողի նման չոր է: Երբ կարդում կամ լսում են Տիրոջ խոսքը անտարբերության արտաքին շերտը չի թողնում, որ հոգևոր սերմը թափանցի սրտի մեջ, և այն մնում է հիշողության մակերեսին և չար ուժերը՝ աշխարհի զվարճանքներն ու գայթակղությունները թռչունների նման մարդկանցից հափշտակում են Տիրոջ խոսքը։

Երկրորդն այն մարդիկ են, ովքեր լսելով Ավետարանի քարոզը սիրո, արդարության, ինքնազոհության մասին, անմիջապես բորբոքվում են լուցկու նման, բայց անմիջապես հանգում: Քարքարոտ տեղում միայն մանր խոտ է աճում, այդպես էլ այս մարդիկ հանդարտ կյանքի պայմաններում ընդունակ են կատարել ջանքեր չպահանջող մանր շատ գործեր: Նրանք դեմ չեն առաքինությանը, բարոյականությանը, սակայն կկամենային Երկնքի արքայություն մտնել առանց բարդությունների: Իսկ երբ համոզմունքների համար ստիպված տանջանքներ ու զրկանքներ են կրում, անմիջապես ուրանում են Տիրոջը: Եսասիրության քարքարոտ շերտը չի թողնում, որ Աստծո խոսքը հասնի ու արմատավորվի նրանց սրտում:

Երրորդն այն մարդիկ են, ովքեր կամենում են միաժամանակ ծառայել և՛ Աստծուն, և՛ մամոնային Նրանք պիտանի չեն Աստծո արքայության համար, քանի որ կամենում են ապրել ըստ Աստծո օրենքների, բայց միաժամանակ չեն ցանկանում հրաժարվել աշխարհի ունայնությունից: Ի վերջո, աշխարհիկ հոգսերի,հետաքրքրությունների և հակումների հորձանուտը կլանում է նրանց իսպառ՝ հոգու միջից արտամղելով այն ամենն, ինչ լուսավոր է,խորհրդավոր և վեհ:

Չորրորդն այն կատարյալ մարդիկ են, ում խոսքը գործից չի տարբերվում, ովքեր Աստծո խոսքը լսելով և ընդունելով՝ փորձում են ապրել աստվածահաճո կյանքով: Ճիշտ է, բոլորը միանման չեն կարողանում ավետարանական խոսքին հնազանդվել, քանզի մեկը պտղաբերում է երեսուն, մյուսը՝ վաթսուն, մյուսը՝ հարյուր, որը նշանակում է, թե մեկն ի վիճակի է կատարել մեկ երրորդն այն ամենի, ինչ իրենից պահանջում է քրիստոնեական հավատը, մյուսը՝ մոտավորապես երկու երրորդը, և միայն քչերին է հաջողվում կատարել ամեն ինչ լիարժեք և կատարելապես: Դրանք ընտրյալ անհատականություններն են:

Չար մշակների առակ

Այգին Իսրայելն է, որ երկրի վրա Աստծո եկեղեցու պատկերն էր: Մինչև Քրիստոս այն հանձնված էր հինկտակարանյան մշակներին՝ հրեաների առաջնորներին ու քահանաներին: Ցանկապատը մովսեսական օրենքն է, աշտարակը Երուսաղեմի տաճարը: Իսկ հնձանը, ուր հոսում էր խաղողի կարմիր հյութը, Հին Ուխտի զոհասեղանն էր, որի վրա թափվեց Անարատ Գառի արյունը: Այգին իր Տիրոջ ամենակալ Աստծուն պետք է պտուղներ տար, որոնք են՝ հավատ, առաքինի կյանք,բարի գործեր: Տիրոջ կողմից ուղարկված ծառաները հինկտակարանյան մարգարեներն ու իրենց գործը շարունակող առաքյալներն էին, որոնց մեծամասնությունն, իրոք, նահատակվել են բռնի մահվամբ, չար մշակների ձեռքով, իսկ իրենց Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, նրանք մերժեցին և քաղաքից դուրս հանելով, խաչեցին: Այդ պատճառով Աստծո եկեղեցին նրանցից վերցվեց և հանձնվեց այլ ժողովրդի, որը կազմվել էր հեթանոսներից: Առակի իմաստն այս է. այսուհետ մենք ենք կազմում Աստծո այգին, մեզ համար է հոգ տանում Տերը, որպեսզի պտուղ տանք՝ Տիրոջ պատվիրանների համաձայն աստվածահաճո կյանքով ապրենք: Առակը նաև այսօրվա համար է իրական և այսօրվա համար մեծ խորհուրդ, հոգևոր պատգամ ունի: Այն ամենը, ինչ որ ունենք՝ բոլոր հաջողությունները, ձեռքբերումները, մերը չեն. Տիրոջն են պատկանում: : Ի վերջո այգու այս օրինակը ոչ միայն եկեղեցին է խորհրդանշում, այլև մեզանից յուրաքանչյուրի կյանքը, որովհետև մեր կյանքն էլ Աստծու կողմից տրված նվեր է: Ինչպես մշակներին տրվեց այգին մշակելու ոչ թե սեփականացնելու համար, այնպես էլ մեր կյանքը մեզ տրված է կարծես թե վարձով. մենք չենք մեր կյանքի տերը. սա է պատճառը, որ մենք ասում ենք՝ մարդ իրավունք չունի ինքնասպանություն գործելու: Մենք մեր կյանքում տեսնելու ենք աղքատ, ընչազուրկ, հիվանդ, մխիթարության կարոտ, դժվարությունների մեջ ընկած,տառապյալ մարդկանց, ում պետք է օգնության ձեռք մեկնել, ում մեր նվաճումներից, մեր ձեռքբերումներից՝ հոգևոր թե նյութական,պետք է մի բան հատկացնել, որովհետև մերը չէ այս ամենը: Մարդիկ կարող են նայել քո աչքերի մեջ և Հիսուս Քրիստոսին տեսնեն, կարող են նայել և կյանք ստանան, ուզենան ապրել: Քրիստոսն այս առակում սքանչելի կերպով ներկայացնում է Աստծու համբերատարության չափը: Ինչպես առակում մշակներին, այնպես էլ մեզ առաջին սխալը գործելուց հետո Աստված իր գթասրտությունից,բարեսրտությունից ելնելով,հնարավորություն է տալիս արժանի մշակ լինելու: Խաչի վրա Հիսուսի թափած Սուրբ արյունը հնարավորություն է տալիս
մեզ մաքրվելու, սրբվելու մեր բոլոր մեղքերից ապաշխարհության միջոցով: Նա, որ Իր Որդուն

չխնայեց, զոհեց հանուն ինձ ու քեզ,ուրեմն ոչինչ չի խնայի մեզ համար։Հիսուսը մեզ կյանք տվեց էլ ավելիով։

«Անառակ որդու վերադարձը» առակում երևում է Աստծու հանդեպ մարդուհիմնական մեղքը՝ անհնազանդություն։ Մարդն ուզում է իր կամքը կատարել և թողնում է Աստծուն։ Գնում է հեռու երկիր և իր կյանքը մեղքի մեջ անցկացնում։ Հորից ստացած ողջ օրհնությունն ու ժառանգությունը վատնեց ու կորցրեց։ Նա կարծում էր, թե ազատություն կշահի, բայց իրականում կորցրեց այն՝ մեղքի գերի դառնալով։Հետո խելքի եկավ, գիտակցեց իր դժբախտությունն ու հիմարությունը։ Մեր վատ վիճակի գիտակցությունը ապաշխարության տանող առաջին քայլն է։ Հետո նա խոստովանեց իր մեղքը և որոշեց հրաժարվել մեղքից և հոր տուն վերադառնալ։Նրա ապաշխարությունն ամբողջական էր։ Ճշմարիտ ապաշխարության մեջ նաև խոնարհություն կա։ Ուշագրավ է որդու խոստովանությունը. «Մեղանչեցի երկնքի և քո առաջ» Որևէ մեկի առաջ գործած մեղքը նաև Աստծո դեմ է ուղղված։ Ըստ էության բոլոր մեղքերն էլ Աստծու դեմ են։ Հայրը սպասում էր իր կորած որդուն։Նույնիսկ մինչև խոստովանությունը հայրն արդեն իսկ ներել էր որդուն։ Տղան արժանի չէր որդի կոչվելու, բայց հայրը վարվեց ոչ թե նրա արժանիքների, այլ իր սիրո և շնորհի համաձայն։Ահա թե ինչպես է Աստված վարվում բոլոր ճշմարիտ ապաշխարողների հետ։Ինչպես հովիվն ուրախացավ կորած ոչխարը գտնելիս/տուն 6/, այնպես էլ հայրը՝ իր որդուն գտնելիս։ Այս առակից պարզ է դառնում Աստծու ողորմությունն ու սերը այն մարդկանց հանդեպ, ովքեր իրեն են գալիս զղջալով։ Փարիսեցիների նման ավագ որդին էլ էր արդար համարում իրեն.,,Այսքան տարի է քո հրամանները զանց չեմ արել,,,- ասաց նա. Չէր ուզում իր եղբորը ներել ու սիրել։Նա զայրացած էր հոր վրա և սառնասիրտ էր դարձել։Այժմ մեղավորը, Աստծուց հեռացածը ինքն էր. Նախանձը մեծ մեղք է Աստծու առջև։Հայրը ավագ որդուն էլ էր սիրում.Աստծու շնորհն անսահման է։ Հայրը բացատրեց որդուն հանդիսության պատճառը, որը բնավ կրտսեր որդուն ավագից առավել պատիվ տալը չէր.իր ուրախությունն էր արտահայտում որդու վերադարձի առթիվ։Քանի որ որդիի մեռած էր կենդանացավ, կորած գտնվեց։ Ուշագրավ է նաև հոր համբերությունն ու բարությունը ավագ որդու հանդեպ. Հեզությամբ համոզելը ստիպելուց լավ է։Մեզանից յուրաքանչյուրը,,կորած որդի,,, նույնիսկ,,ավագ եղբայր,, է…

Կորած ոչխարի առակը

Ղուկասի ավետարանը հայտնի է իր առակների ճոխությամբ,Կորած ոչխարի մասին,, պատմող առակում պատկերված է Տիրոջ սերը։Աստված այնքան է սիրում մարդկանց, որ ամեն ջանք գործ է դնում, որ հետ բերի մեղավորին իր արքայություն։ Տերն անսահման մեծ սիրով է սիրում իր զավակներից յուրաքանչյուրին։ Ամեն մեկի կորուստը Տիրոջ համար մեծ ցավ է և ամեն մեկի փրկությունը Տիրոջ ուրախությունն է։

-Ո՞վ է այն մարդը, որ երբ 100 ոչխար ունենա,և կորցնի նրանցից մեկը, չի թողնի 99-ին և չի գնա կորածի հետևից և երբ որ գտնի, ուրախությամբ, ուսերի վրա դնելով՝ տուն չպիտի բերի, չպիտի կանչի իր բարեկամներին, ուրախանա, որ կորած ոչխարը գտնվեց։ Շատ հետաքրքիր է Քրիստոսի եզրափակիչ խոսքը. Երկնքում մի մեղավորի համար ավելի մեծ ուրախություն պիտի լինի,քան 99 արդարների համար, որ ապաշխարության կարիք չունեն։ Ոչ թե առողջներին է բժիշկ պետք, այլ՝ հիվանդներին…Որովհետև Ես չեկա արդարներին կանչելու, այլ մեղավորներին ապաշխարհության։ Մեկնությունները տարբեր են, ոմանք ասում են՝ այս 99-ը այն հավատացյալներն են, որոնք հավատարիմ. են Տիրոջ պատգամներին և փորձում են ապրել առաքինի ու արդար կյանքով։ Մեկ այլ տարբերակի համաձայն այս մարդիկ ննջեցյալ այն

հավատավոր անձինք են/ սրբեր, մաքրակենցաղ մարդիկ/, ովքեր արդեն իսկ արժանացել են Տիրոջը տեսնելու երանությանը, բայց այս երկու տարբերակն էլ խոցելի է. երկրի վրա չկա որևէ մեկը, որ մեղք չի գործել և կարիք չունի ապաշխարության, ինքնամաքրման .

2-րդ տարբերակն էլ խոցելի է. այնքանով, որ Քրիստոս խոսում է այս աշխարհի մարդկանց մասին.

Ուրեմն կա 3-րդ տարբերակ . ըստ որի՝Քրիստոս նկատի ուներ փարիսեցիներին ու օրենսգետներին, որոնք ավելի անկարևոր էին, քան ամենամեղավոր մարդը, ով դարձի է գալիս, զղջում: Ի՞նչ է ասում ավետարանական այս դրվագը մեզ այսօր, որքանո՞վ ենք մենք նման այն փարիսեցիներին և օրենսգետներին, ովքեր իրենցից բացի ուրիշ որևէ մեկին չէին տեսնում արդարության ճանապարհը բռնած: Այս առակի պատգամը այն է, որ կարողանանք մշտապես նախ մեր անձերը քննել ու տեսնել, որ ամեն պարագայի մենք ենք, որ ապաշխարության կարիք ունենք և ապաշխարության ճանապարհը բռնած մեկին տեսնելով՝ պիտի ուրախանանք:

Հավատի լույսը

Ոչ ոք ճրագը վառելուց հետո այն չի թաքցնի կամ կաթսայի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա,որպեսզի ներս մտնողները լույսը տեսնեն: Այս առակով Հիսուսը ուզում է մարդկանց սովորեցնել, որ կարևորը մարդու ներաշխարհն է, ոչ թե արտաքինը: Մարմնի ճրագն աչքն է. երբ քո աչքն առողջ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի, իսկ երբ քո աչքը հիվանդ է, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Շատ անգամ մարդիկ տարված են արտաքին երևացող բաներ մաքրելով, մինչդեռ մեր ներսը լի է հափշտակությամբ և չարությամբ: Բայց երբ մարդը լսում, հավատում է Աստծո խոսքին, նրա մարմինը նմանվում է ճրագի, որն իրենից լույս է ճառագում, հետևաբար կարևորը մարդու հավատն է ու ներքին լույսը, այլ ոչ թե արտաքինը, որը շատ անգամ խաբուսիկ է: Հիսուս Քրիստոսը լույսը համեմատում է բարոյական մաքրության, այսինքն՝ բարության, սիրո, ազնվության, իմաստության հետ, և ինչպես մոմը, որ դնում են վերևում, որպեսզի լուսավորի շրջապատը, այնպես էլ մարդը իր հոգու լույսը չպետք է թաքցնի, այլ ցույց տա և փոխանցի ուրիշներին:

Ճրագի օրինակը.

Եղիր Աստծո ճրագը, որ լուսավորես շրջապատդ,, Կարծում եմ ճրագը քրիստոնեությունն է, որը չէր կարող երկար ժամանակ ծածուկ մնալ ու գաղտնի գործել, միայն թե այդ լույսը համարձակ դուրս բերող էր պետք:

Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում. Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած տիկերի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր գինու: Հնի հետ դրանք անհարին են, պետք է նոր գինին նոր տիկի մեջ լցնել, Նոր Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի: Խորհուրդը այն է, որ եթե մենք ընդունում ենք Հիսուսին որպես մեր անձնական Տեր ու փրկիչ, բայց էլի շարունակում ենք ապրել մեր առաջվա մեղսալի կյանքովՏերը չի կարող նոր բան լցնել մեր մեջ:Դրա համար Հիսուսին որպես Տեր ու փրկիչ ընդունելուց հետո դու դառնում ես նոր տիկ և Աստված չի խնայում ամենալավը քեզ համար:

Նոր կարկատանը հին հագուստի վրա :

Այստեղ մեկնաբանությունը նույնն է ինչ Նոր գինին հին տիկերի մեջ չի դրվում առակում: Հիսուսի բերած համեմատությունների համաձայն՝ հին սովորությունները հնացած հագուստի են նման, իսկ Իր ուսմունքն ու քարոզները՝ նոր կտորի: Հնի հետ դրանք համադրելը անհարիր է: Պետք է նոր

Ուխտը նոր օրենքներով կազմել, որպեսզի հաստատուն հիմքով պատրաստվի և պահպանվի:

Պահված գանձի օրինակը.

Այստեղ շեշտը դրված է գանձի վրա, երբ հողագործը գտնում է այդ գանձը, նրա մոտ մեծ ցանկություն է առաջանում տիրանալ այդ գանձին՝ վաճառելով ամեն ինչ, ինչ որ ուներ: Ստացվում է, որ երկնային արքայությունը ժառանգելու համար պետք է հրաժարվել այս աշխարհում ունեցած հարստությունից: Ստացվում է, որ մարդը կարող է պատահաբար գտնել երկնքի արքայությունը և պետք է իմաստուն կերպով ընտրություն կատարել:

Որոմի առակը.

Ագարակատերը Հիսուսն է, իսկ ագարակը՝ աշխարհը: Ցորենի սերմերը բարի, իսկ որոմի սերմերը չար մարդիկ են: Բարի մարդկանց գործերը բարի պտուղներ են տալիս, չարերինը՝ չար: Ցորենն ու որոմն առանձնացնելը նշանակում է, որ ամեն մարդ իր գործերի համար արժանի հատուցում պետք է ստանա: Իսկ չար մարդիկ միանգամից չեն պատժվում, քանի որ այդ դեպքում հնարավոր է նեղություն կամ վիշտ պատճառել նաև բարի մարդկանց: Ու բացի այդ, յուրաքանչյուրին ժամանակ է տրվում զղջալու և ուղղվելու համար:

Աշակերտ լինելու գինը.

Մարդկային կյանքը աշտարակի կառուցման նման է, որի հիմքը մարդու սերն է: Հիսուսին հետևելու իմաստը փրկությունն է, որի համար անհրաժեշտ է սիրել Աստծուն ամբողջ հոգով ու մտքով: Եվ Հիսուսին հետևելուց առաջ մարդը պետքէ հաշվի նստի ինքն իր հետ և հասկանա այն գինը, որն իր համար վճարել է Հիսուսը, խաչի վրա թափելով Իր Սուրբ արյունը: Եթե մարդ ախակերտ չէ, նա կորցնում է աղի համը: Դա կարևոր է հասկանալ, եթե դու որոշել ես գնալ Հիսուսի հետևից Նա քեզ կոչում է աղ: Ինչու են միսն ու ձուկը համեմում աղով, որ որթեր չառաջանան, իսկ ինչու՞ է Հիսուսը մեզ ասում աղ,որ մեր մեջ էլ որթեր չառաջանան: Նա ասում է, որ մենք աշխարհի աղն եք, մենք աշխարհի լույսն եք: Հանկարծ այդ աղը չանհամանա, հանկարծ այդ լույսը չմարի՝: Աղը նյութի մեջ լուծվելիս նրա էությունն ու արտաքին տեսքը չի փոխում, այլ միայն իր համն է տալիս. նույնպես և քրիստոնեությունը մարդու կամ մարդկային հասարակության մեջ որևէ արտաքին բեկում չի առաջացնում, սակայն ազնվացնում է մարդու հոգին և դրա միջոցով փոփոխում նրա ամբողջ կյանքը: Եթե աղը անհամանա ասելով՝ նա նկատի ուներ այն մարդկանց, ովքեր, մեկ անգամ ճաշակելով Սուրբ Հոգու հետ ազնիվ հաղորդությունը, այնուհետև ընկան աններելի մեղքի մեջ և այլևս առանց Աստծո առանձնակի օգնության ընդունակ չեն հոգեպես նորոգվելու:

Անպտուղ թզենին

Տերևալից, բայց պտուղ չունեցող այս թզենին խորհրդանշում է նրանց, ովքեր արտաքին բարեպաշտությունը պահելով չեն պտղաբերում բարի գործերով: Քրիստոսը թզենին անիծելով մեզ ավանդեց, որ արտաքին բարեպաշտությունից բացի հարկավոր է ունենալ նաև բարի գործերով և ողորմածությամբ աճեցրած փրկության պտուղը:

Երեք ծառաների առակը

Տերը, որ գնում էր հեռու երկիր, Հիսուս Քրիստոսն է: Նա կանչեց Իր ծառաներին և հանձնեց նրանց Իր ունեցվածքը՝ ավետարանական ճշմարտության խոսքերը, քանզի «Տիրոջ խոսքերը … ինչպես

ընտիր ու փորձված արծաթ՝… մաքրված ու զտված» են (Սաղ. 11:7): Ծառաները նրանք են, ում վստահված է խոսքի ծառայությունը՝ եպիսկոպոսները, քահանաները, սարկավագները և մենք՝ բոլորս, որ ընդունեցինք Տիրոջից քանքարներ, այսինքն՝ աստվածաշնչյան պատվիրանները և Սուրբ Հոգու շնորհները: Մեզ հանձնելով Ավետարանի խոսքն ու ուսմունքը (յուրաքանչյուրին՝ ըստ իր կարողության, այսինքն՝ հավատքի և մաքրության չափով)՝ Աստված սպասում է համապատասխան պտուղներ՝ բարոյականություն, առաքինություն, ժուժկալություն, ողորմածություն, հեզություն… Տերը մեզ չի դատում այն բանի համար, թե ինչքան պտուղ ենք բերել, այլ՝ թե ինչպես ենք վերաբերում մեզ վստահված քանքարին: Քարոզելու շնորհ, հարստություն կամ իշխանություն, կամ ինչ-որ գիտելիք և ընդունակություն ստացողը պետք է բազմապատկի դրանք Եկեղեցու և մերձավորների օգտին:

Տաղանդը հողի տակ թաքցնել՝ նշանակում է սեփական շնորհներից չկարողանալ օգտվել, Աստծուն ու մերձավորներին ծառայելու պարտքը մինչև վերջ չկատարել: Լումայափոխները նրանք են, ովքեր Քրիստոսի խոսքի համաձայն՝ Ահեղ Դատաստանի օրը պիտի վկայեն մեզ համար, թե՝ երբ քաղցած էինք, մեզ կերակրեցիք, ծարավ էինք, և մեզ ջուր տվեցիք, օտար էինք, և մեզ ձեր մեջ առաք, մերկ էինք, և մեզ հագցրեցիք, հիվանդ էինք կամ բանտարկյալ, և մեզ այցի եկաք (տե՛ս՝ Մատթ. 25:35-40): Նրանց միջոցով Աստծո խոսքի արծաթը բազմապատկվում է, քանի որ ճշմարտության խոսքին ավելանում է հավատքը, հավատքին՝ արդարության գործերը, գործերին՝ գոհունակությունը, և այսպես բազմապատկվում է Աստծո փառքը: Տերը միանման գովում է երկուսին էլ, ովքեր իրենց տրվածի վրա աշխատեցին, նրանցից յուրաքանչյուրը լսում է. «Ապրե՛ս, բարի՛ ու հավատարի՛մ ծառա»: Բարի ասելով՝ ընդհանրապես հասկանում ենք մարդասերին ու առատաձեռնին, ով բարություն է անում իր մերձավորներին: Եվ քչի մեջ հավատարիմ եղողները շատի վրա են կանգնելու, քանզի ինչ էլ ստանանք այս կյանքում, ինչ բարիքներ էլ վայելենք, չնչին են հանդերձյալ բարիքների հետ համեմատած: Ինչպես Դավիթ մարգարեն է ասում, Տերն ուրախանում է Իր արարածներով (տե՛ս՝ Սաղ. 103:31):

Տիրոջ վերադարձը խորհրդանշում է Քրիստոսի Երկրորդ Գալուստը, երբ ամեն ոք պետք է հաշիվ տա անաչառ Դատավորին, թե ինչպես է օգտագործել Աստծուց ստացած շնորհներն ու պարգևները: Իրենց մնասներն ու քանքարները բազմապատկածները գովասանքի կարժանանան, և յուրաքանչյուրը կստանա իր գործադրած ջանքերին համապատասխան վարձատրություն: Իսկ նա, ով թաքցրել է իր մնասն ու քանքարը, կպատժվի որպես չար և ծույլ ծառա, քանզի չկամեցավ ի բարին գործադրել ստացած ձիրքերը, և նրա մեջ Աստծո շնորհն անպտուղ մնաց: Անպիտան ծառան աշխատելու ժամանակն անցկացրեց անգործությամբ և իրավունք չուներ մեղադրել իր տիրոջը խստության մեջ: Տերը նրանից, ինչպես մյուսներից քիչ չէր պահանջում: Աստծուն դաժանության մեջ մեղադրելը մեղքի պատճառով Աստծո որդի լինելու զգացումը կորցրած և դրա պատճառով Աստծուն դաժան ու անարդար, իսկ իրեն որպես զոհ պատկերացնող մեղավորի սովորական ինքնարդարացում է: Իրականում մեր Տերը Նա չէ, ով հանդիմանում ու սպառնում է, այլ Նա, ով գովում է մեզ բարի արարքների համար, բարեհաճ է մեր նկատմամբ և օրհնում է մեզ:

Եզրակացություն

Այս առակները ընթերցելով վստահաբար կարող ենք ասել, որ սրանցից յուրաքանչյուրը կարող է միայն դրական ազդեցություն թողնել մեր երեխաների հետագա կյանքի վրա: Եթե համեմատական անցկացնենք Աստծո տասը պատվիրանների հետ հասկանում ենք, որ մեզանից միայն պահանջվում է ապրել Աստծո աչքին հաճելի, բարի կյանքով: Այսպիսով, դասը, հաճախակի համեմելով_____աստվածաշնչյան առակներով, կդառնա ավելի հետաքրքիր, հագեցած ու տեսանելի,իսկ աշակերտները կդառնան բարձր արժեհամակարգի տեր մարդիկ, կուղղորդվեն բարոյական սկզբունքներով և արժեքներով: Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում անչափ կարևոր են մարդասիրության, հայրենասիրության, ազնվության, արդարամտության, քրիստոնեական հավատի վերաբերյալ աստվածաշնչյան պատվիրանները, որոնք գրականության սնուցող կենարար աղբյուրներից են: Աստվածաշունչը շարունակում է պահպանել հասարակական մտածողության ձևավորման վրա ունեցած իր անգնահատելի ազդեցությունը, սերմանել՝ սեր ու բարություն: Այդ պատճառով աստվածաշնչյան առակները միշտ արդիական են, սիրելի և ընկալելի: Այդ պատճառով էլ աստվածաշնչյան աշխարհայեցողությունն առանձնակի կարևորություն ունի մատաղ սերնդի հայրենասիրական, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում:

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1.Աստուածաշունչ Մատեան Հին ու Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և Հայաստանի Աստուածաշնչային Ընկերութիւն, 2004

2.Մաղաքիա արք. Օրմանյան, Համապատում, Ս. Էջմիածին,1997

3. Մաղաքիա արք. Օրմանյան,Տեղիք Աստուածաբանութեան, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1985

4.Գարեգին Ա., Տեսական Աստուածաբանություն

5. Qahana.am

6. Հայոց Եկեղեցու պատմություն, դասագիրք,Երևան 2014